

**ՄԱՆԿԱԿԱՆ ՈՐԴԵՂԱՅԻՆ ԿԱԹՎԱԾ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ
ՇՈՇԱՓՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ
ՏԵՐԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ**

Մարուքյան Վ.Ս.

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ ընկալում, զգայարան, մանկական ուղեղային կաթված, շոշափողական ընկալում, մանկավարժների հարցում, տվյալներ:

Ինչպես հայտնի է, ընկալումը շրջակա միջավայրի առարկաների հետ փոխգործունեության ընթացքում մարդու հոգեկանում առաջացած ամբողջական պատկերն է, ճանաչողական գործունեության ձևավորման հիմքը: Հաճախ զգայական ընկալում արտահայտությունը չի ըմբռնվում իր ամբողջ նշանակությամբ: Այն զգայական օրգանների միջոցով իրականացվող ճանաչողական գործընթաց է, որի օգնությամբ ձևավորվում է աշխարհի մասին մեր պատկերացումները:

Գաղտնի չէ, որ նույն առարկան տարբեր մարդիկ ընկալում են տարբեր կերպ, նույն իրադարձությանը մարդիկ արձագանքում են, երբեմն, բոլորովին հակասական կերպով: Մեզ շրջապատող աշխարհը ընկալում ենք զգայական՝ տեսողական, լսողական, համի, հոտառական, շոշափողական օրգանների միջոցով: Չզայական ընկալումը տեղի է ունենում հետևյալ կերպ. սկզբում մենք զգում ենք, ընկալում ենք առարկան զգայական

օրգաններով, իսկ վերլուծությունը և առարկայի մասին դիտարկումները կատարվում է գլխուղեղի համապատասխան բաժնի կողմից:

Ընկալումը համարվում է նախադպրոցական տարիքի առաջատար հոգեկան գործընթաց, որն ապահովում է տեղեկատվության ստացումն ու առաջնային մշակումը՝ մտածողության, խոսքի, հիշողության և ուշադրության զարգացման համար ստեղծելով հիմք: Ընկալման առավել էական փոփոխությունները տեղի են ունենում երեխայի կյանքի առաջին տարիներին:

Լ.Ս. Վիգոտսկու հետազոտությունները ցույց են տվել, որ բարձրագույն հոգեկան գործընթացների զարգացումն առաջին հերթին պայմանավորված է ավելի պարզ գործառույթներով: Նա ընկալումը համարում էր նախադպրոցական տարիքի առաջատար հոգեկան գործընթաց, կարևորում նրա դերը խոսքի զարգացման գործում և ապացուցում էր, որ երեխայի խոսքը չի կարող զարգանալ առանց ընկալման գործընթացի զարգացման, երեխան կարող է խոսել և մտածել միայն ընկալածի մասին: Լ.Ս. Վիգոտսկին կարևորում էր ինչպես շոշափողական, տեսողական-առարկայական, այն-

պես էլ տարածական ընկալումը և այլն՝ ընդգծելով, որ այս էլ իրենց հերթին ստեղծում են առաջնային հիմք հոգեկան գործընթացների զարգացման համար: /6/

Ընկալման զարգացումը նախադպրոցական տարիքում ունի իր առանձնահատկությունները, որոնք յուրահատուկ ձևով են արտահայտվում մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների դեպքում՝ պայմանավորված առաջնային խանգարման հետ: Մանկական ուղեղային կաթվածը օստոգենեզի ընթացքում ուղեղի վնասման պատճառով առաջացած հենաշարժողական համակարգի խանգարում է: Առավել խորությամբ խանգարված են լինում կամային շարժումները, խոսքը և այլ կարևոր գործառույթներ ղեկավարող գլխուղեղի մեծ կիսագունդը: Այս երեխաների ընկալումը զգալիորեն տարբերվում է բնականոն զարգացում ունեցող իրենց տարեկիցների ընկալումից, ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներով: Ընկալման խանգարման մեջ էական է ոչ միայն շարժողական համակարգի, այլև զգայական, մտավոր և խոսքային խանգարումները: Ընկալման զարգացումը պայմանավորված է գործունեության տարբեր տեսակների ձևավորման մակարդակով /առարկայական, խաղային և այլն/: /2,3,4,5/

Գ.Ա.Ուրնատեվան նշում է, որ կրտսեր նախադպրոցականի ընկալումն /3-4տ./ ունի առարկայական բնույթ, այսինքն՝ առարկայի բոլոր հատկությունները, օրինակ՝ գույնը, ձևը, մեծությունը և այլն, երեխայի կողմից չեն առանձնացվում: Նա տեսնում է դրանք առար-

կայի հետ միասին: Ընդ որում, ընկալման ընթացքում նա տեսնում է առարկայի ոչ թե բոլոր հատկությունները, այլ՝ ավելի արտահայտիչները, երբեմն անգամ մեկ հատկանիշ է տարբերակում՝ որի հիման վրա էլ կարողանում է առարկամյուսից տարբերել: Օրինակ, խոտը կանաչ է, կիտրոնը՝ դեղին: Միջին նախադպրոցական տարիքում /4-5տ./ երեխան ճանաչում է առարկային բնորոշ հատկությունները, կարողանում է տարբերել դրանք համով, հոտով, փափկությամբ և այլն: /1/

Մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականներն ունենում են շոշափողական ընկալման խանգարումներ. սեփական շարժումների թույլ զգացողություն, առարկայական գործունեության դժվարություններ, որոնք դառնում են շոշափողական ընկալման խանգարման պատճառ: Հայտնի է, որ բնականոն զարգացում ունեցող երեխայի շրջապատող աշխարհի առարկաների հետ ծանոթացումը տեղի է ունենում առարկան շոշափելու ճանապարհով: Առարկաների հետ գործողության միջոցով երեխաները ստանում են նրանց հատկությունների մասին տեղեկություն. ձևի, քաշի, հարթության, կայունության, ջերմային հատկությունների, չափերի և այլն: Մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականներն ունենում են առակայա-գործնական գործունեության սահմանափակումներ, ձեռքի շոշափողական շարժումները թույլ են, առարկայի ճանաչումը շոշափման միջոցով դժվարացած /ստեփրոզնոզ/: Առարկայի շոշափումից տեղեկատվության ստացումը ձեռքերով կարող է

լինել ոչ հստակ: Սա կարելի է համեմատել այն երևույթի հետ, երբ մենք հաստ ձեռնոցով փորձում ենք զգալ առարկաների ինչպիսի լինելը: Ակտիվ շոշափողական ընկալման խանգարումը հանգեցնում է առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացումների, նրա հատկությունների ոչ լիարժեք ընկալման, որի հետևանքով տեղի է ունենում աշխարհի մասին գիտելիքների, պատկերացումների կրճատման, գործունեության տարբեր ձևերի, ինչպես նաև գրելու դժվարություններ: Մանկական ուղեղային կաթվածի ժամանակ երեխայի շարժողական խանգարումներին բնորոշ են ոչ միայն այսպես այն շարժումը կատարելու դժվարություն կամ անհնարիանությունը, այլև այդ շարժումները զգալու թուլությունը, ինչի պատճառով չեն ձևավորվում շարժումների մասին երեխայի ճիշտ մտապատկերները: /2,3,5, /

Հաշվի առնելով մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների զգայական ընկալման զարգացման բնորոշ առանձնահատկությունները՝ պիտի կարևորել այդ ուղղությամբ տարվող զարգացնող աշխատանքները, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժների և դաստիարակների տեղեկացվածությունից: Այդ խնդրի պարզաբանման նպատակով ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ կատարել ենք հարցում:


Լրացված հարցաթերթիկների քանակը 30-ն է, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցմանը մասնակցած դաստիարակների մեծամասնությունը՝ 47 %-ը /14 հոգի/ ունեն բարձրագույն կրթություն,

36%-ը(10 հոգի)՝ բարձրագույն մասնագիտական, իսկ մնացած 17%-ը(6 հոգի)՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Հարցվողների մեծամասնությունը ուներ երկար տարիների աշխատանքային փորձ 75%(22 հոգի):

Մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների շոշափողական ընկալման զարգացումը կարևորել են մանկավարժների 83%-ը(24) շոշափողական ընկալման զարգացումը, իսկ մնացած 17%-ը(6) չեն պատասխանել:

Հաջորդ հարցին, թե որ պարապմունքների ընթացքում է նպատակահարմար զարգացնել շոշափողական ընկալումը, մասնագետների 10%-ը(3 հոգի) նշել է, մանր և ընդհանուր մոտորիկային զագացմանն ուղղված պարապմունքները, 36%-ը(11)՝ խաղային գործունեության ընթացքում, մասնավորապես դիդակտիկ խաղերը, իսկ մեծամասնությունը՝ 54%-ը(16) կարևորել է, կերպարվեստային արգասաբեր գործունեության պարապմունքները/ծեփ, ապլիկացիա, նկաչություն և այլն/:

Այն հարցին, թե ինչ են հասկանում զգայական ընկալում ասելով՝ մասնագետների 27%-ը(8) չհասկանալով հարցի իմաստը, տվել են սխալ պատասխան, 10%-ը (3) չեն պատասխանել հարցին, իսկ մնացած 63%-ը(19), զգայական ընկալում ասելով, հասկացել է շրջապատող աշխարհի ընկալումը զգայարանների միջոցով /համի, հոտի, տեսողության, լսողության, շոշափելիքի/ :/ նկար 1/




Նկար 1. «Ինչ եք հասկանում զգայական ընկալում ասելով» հարցին մասնագետների պատասխանների ցուցանիշները:

Այն հարցին, թե արդյոք նախադրոցական հաստատությունների ուսումնական ծրագրերում բավականաչափ ուշադրություն դարձված է երեխաների զգայական ընկալման զարգացման հարցերին և ինչպես եթե այո, մասնագետների 33%-ը(10) պատասխանել է՝ ոչ, 37%-ը(11) նշել է, որ դժվարանում է պատասխանել, իսկ 30%-ը(9) այդ հարցին պատասխանել է, որ նախադրոցական ուսումնական հաստատությունների ուսումնական ծրագրերում երեխաների զգայական ընկալման զարգացման հարցերին բավականաչափ ուշադրություն դարձված է և այն հիմնականում իրականացվում է խաղային գործունեության, ծեփագործության միջոցով:

Հարցումներից միաժամանակ պարզ դարձավ, որ մասնագետների 63%-ին(19) ծանոթացել մանկական ուղեղային կաթված ունեցող նախադրոցականների շոշափողական ընկալման զարգացման մակարդակը որոշող մեթոդներ, 20%-ը(6) հանդիպել է, բայց չի կարող նշել, իսկ մասնագետների 17%-ը(5) չի պատասխանել հարցին:

Հարցման ընթացքում նաև պարզ դարձավ, որ իրենց աշխատանքում իրականացնում են մանկական ուղեղային կաթված ունեցող նախադրոցականների շոշափողական ընկալման զարգացման ուղղված աշխատանքներ, 17%-ը(5) պատասխանել է ոչ, 10%-ը(3) նշել է՝երբեմն, մասնագետների25%-ը (7)դժվարացել է պատասխանել, 13%-ը(4) պատասխանել է, որ անցկացնում է տարբեր խաղերի, ծեփի, ապլիկացիայի միջոցով, իսկ մեծամասնությունը՝ 35%-ը(11) նշել է, որ աշխատանքները իրականացվում են միայն առանձին պարապմունքների ժամանակ: Ստացված արդյունքների տոկոսային հարաբերությունը ներկայացնենք գրաֆիկական պատկերի տեսքով /Նկար2/:



Նկար 2. «Իրենց աշխատանքում իրականացնում են մանկական ուղեղային կաթված ունեցող նախադրոցականների շոշափողական ընկալման զարգացման ուղղված աշխատանքներ» հարցին մասնագետների պատասխանների ցուցանիշները:

Հաջորդ հարցին, թե մանկական ուղեղային կաթված ունեցող նախադրոցականների շոշափողական ընկալման զարգացման ուղղությամբ աշխատանքի էությունը, 27%-ը(8) չի պատասխանել հարցին, 20%-ի(6) կարծիքով իրենց աշխատանքի էությունը երեխանե-


րի ընդհանուր զարգացման մեջ, իսկ 53%-ը(16) պատասխանել է, որ պետք է տարբեր խաղերի միջոցով երեխաների համար մատչելի դարձնել շրջապատի ընկալումը:

Այն հարցին, թե արդյոք կարիք կա հատուկ մեթոդիկա մշակել մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների շոշափողական ընկալման զարգացման վերաբերյալ հարցմանը մասնակիցների 10%(3) պատասխանել է ոչ, 15%-ը(5) դժվարացել է պատասխանել, հարցվողների 37%-ը(11) նշել է, որ անհրաժեշտ է միայն պիտի հաշվի առնել մանկական ուղեղային կաթված ծանրության աստիճանը, իսկ 38%-ը(11) անհրաժեշտություն հատուկ մեթոդիկաների է համարում առկայությունը:

Հարցումներից նաև պարզ դարձավ, որ 20%-ը(6) անհրաժեշտ է համարում համապատասխան գրականության առկայություն, 30%-ը(9) առաջարկություններ չի արել, իսկ մեծամասնությունը՝ 50%-ը(15) նշում է, որ պետք է կատարելագործել նպատակաուղղված միջիցներ, խաղեր, մեթոդներ: Վերոհիշյալ արդյունքները ներկայացնենք գրաֆիկական պատկերի տեսքով: **Նկար 3/**

Այսպիսով, մանկատների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների և դաստիարակների

րի հետ անցկացված հարցումից պարզ է դարձավ, որ հարցմանը մասնակցած մասնագետների մեծամասնությունը վստահ է, որ մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների շոշափողական ընկալման ձևավորումը կարևոր է այս երեխաների ընդհանուր զարգացման համար, սակայն նրանք ծանոթ չէին կոնկրետ զարգացնող մեթոդների և միջոցների: Ուստի առաջարկում էին մշակել մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների շոշափողական ընկալման զարգացմանը նպաստող հնարավորինս շատ մեթոդներ, միջոցներ, խաղեր, մոտեցումներ:



Նկար 3. «Մանկական ուղեղային կաթված ունեցող նախադպրոցականների շոշափողական ընկալման զարգացմանն ուղղված առաջարկներ» հարցի վերաբերյալ մասնագետների պատասխանների ցուցանիշների վերլուծությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Т. Б. Епифанцева и др. Настольная книга педагога-дефектолога Ростов н/Д: Феникс, 2007,- . 458с.
2. Нэнси Р. Финни Ребенок с церебральным параличом Помощь, Уход, Развитие Москва 2005,- 274с.
3. Основы специальной психологии: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений / Л. В. Кузнецова, Л. И. Переслени,

- Л. И. Солнцева и др.; Под ред. Л. В. Кузнецовой. — М.: Издательский центр "Академия", 2002. — 480 с.
4. Урунтаева Г.А. Дошкольная психология: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений. - 5-е изд., стереотип. - М.: Издательский центр "Академия", 2001. - 336 с.
 5. Шипицына Л.М., Мамайчук И.И. Детский церебральный паралич /Авторы: - СПб., Изд-во "Дидактика Плюс", — 2001, 272 с.
 6. Л .С. Цветкова Методика нейрорепсихологической диагностики детей. Изд 4-е. исправленное и дополненное. - М.: Педагогическое общество России, 2002. - 96

РЕЗЮМЕ

ИССЛЕДОВАНИЕ УРОВНЯ ИНФОРМИРОВАННОСТИ ПЕДАГОГОВ СПЕЦИАЛИЗИРОВАННЫХ УЧЕРЕЖДЕНИЙ О РАЗВИТИИ ТАКТИЛЬНОГО ВОСПРИЯТИЯ У ДЕТЕЙ С ДЕТСКИМ ЦЕРЕБРАЛЬНЫМ ПАРАЛИЧОМ

Марукян В.С.

Доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук

В статье предоставлены результаты исследования уровня информированности педагогов специализированных учреждений о

развитии тактильного восприятия у детей с детским церебральным параличом.

SUMMARY

THE PROFESSIONAL INSTITUTION'S PEDAGOGUES AWARENESS LEVEL ABOUT TACTILE PERCEPTION OF CHILDREN WITH CEREBRAL PALSY

Marukyan V.

Associate professor Chair of Special Pedagogy and Psychology, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Candidate of Pedagogical Sciences

In this article are presented survey results of professional institutions specialists' awareness level on tactile

perception of children with cerebral palsy.